ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

2018թ մայիսի 16-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 9-րդ «Բ» դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Վ. Մարգսյանը, տնօրեն Ն. Բաբայանը, տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Զոյա Գևորգյանը և սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Անժելա Գինոսյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցում 2017-2018 ուստարվա գիտելիքների ստուգման, ավարտական և պետական ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման ժամանակացույցին և աշխատակարգին, սովորողների փոխադրման, ավարտման , ուստարվա ընթացքում բացակայած սովորողների փոխադրման կարգին ծանոթանալու հարցը:
2. Գալիք ուսումնական տարվան պատրաստվելու, աշակերտական համազգեստի, կոշիկների անհրաժեշտ նմուշներ ձեռք բերելու հարցը:

1.Լսեցին. -ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցում 2017-2018 ուստարվա գիտելիքների ստուգման, ավարտական և պետական ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման ժամանակացույցին և աշխատակարգին, սովորողների փոխադրման, ավարտման , ուստարվա ընթացքում բացակայած սովորողների փոխադրման կարգին ծանոթանալու հարցը:

Տնօրեն Ն. Բաբայանը խոսեց տարեվերջյան անելիքների և դրանց կարևորության մասին՝ որպես տարվա ընթացքում կատարած աշխատանքները պատասխանատվորեն հանրագումարի բերելու անհրաժեշտության:

Նա ներկայացրեց ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցում 2017-2018 ուստարվա գիտելիքների ստուգման, ավարտական և պետական ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման աշխատակարգը և ժամանակացույցը, սովորողների փոխադրման և ավարտման, ուստարվա ընթացքում բացակայած սովորողների փոխադրման կարգը: Տնօրենը հորդորեց լինել ուշադիր, գրանցել քննությունների և գիտելիքների ստուգման օրերը, լինել հետևողական աշակերտների ներկայությունը քննություններին և քննություններին պատրաստվելու համար կազմակերպվող կոնսուլտացիաներին ապահովելու համար:

Իր խոսքում 9-րդ դասարանի դասղեկ Վարդիթեր Մարգսյանը ևս կարևորեց ծնողների հետևողական աշխատանքի կարևորությունը՝ քննություններին բարեխղճորեն պատրաստվելու և լավ հանձնելու հարցում:

Մենք անում ենք ամեն ինչ, կոնսուլտացիաներ կազմակերպում ենք ամեն օր, պատրաստակամ ենք ցանկացած աշակերտի հետ կատարելու ամենօրյա անհատական աշխատանք, միայն թե

նրանք կարողանան ի ցույց դնել տարիների ընթացքում ուսուցչի կատարած բարեխիղճ աշխատանքի արդյունքում ձեռք բերած գիտելիքները:

Որոշեցին.- Ի գիտություն ընդունել գիտելիքների ստուգման, ավարտական և պետական ավարտական քննությունների կազմակերպման ժամանակացույցն ու աշխատակարգը, լինել հետևողական աշակերտների նկատմամբ՝ քննություններին լավ պատրաստվելու և ներկայանալու համար:

2.Լսեցին. -Գալիք ուսումնական տարվան պատրաստվելու, աշակերտական համազգեստի, կոշիկների անհրաժեշտ նմուշներ ձեռք բերելու հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Վարդիթեր Սարգսյանը: Նա նշեց, որ իրենց աշակերտների մի մասը ունեն նոր համազգեստ ձեռք բերելու խնդիր. դրանք փոքրացել են և պետք է փոխարինվեն նորերով: Նա խնդրեց ծնողներին կազմակերպել նոր, անհրաժեշտ նմուշի համազգեստներ ձեռք բերելու գործընթացը:

Սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Անժելա Գինոսյանը իր ելույթում նշեց, որ իրեն են դիմել տարբեր դասարանների մի շարք ծնողներ, որոնք խնդրել են կազմակերպել մասնագետների հանդիպումը և համազգեստի չափագրման գործընթացը:

Տնօրեն Նաիրա Բաբայանը նշեց, որ մեր դպրոցի համար ձեռքբերում է համազգեստ կրելը, որը կարգապահության, դպրոցականի վայել տեսքի, կեցվածքի, պահվածքի կարևոր գործոններից է: Շատ կարևոր է նաև ճիշտ, ոչ բարձրակրունկ, հարմարավետ կոշիկների ընտրությունը հատկապես աղջիկների համար: Տղաները պետք է ձեռք բերեն սպիտակ, առանց ավելորդ աքսեսուարների վերնաշապիկներ:

Ելույթ ունեցավ 8-րդ դասարանի ծնող Ամալյա Մկրտչյանը: Նա շնորհակալություն հայտնեց դպրոցի տնօրենին այդ կարևոր աշխատանքի կազմակերպման համար՝ նշելով .որ ծնողները համազգեստի շնորհիվ ազատվել են անընդհատ նոր հագուստներ ձեռք բերելու ավելորդ հոգսից, ինչպես նաև աշակերտների միջև ավելորդ մրցակցությունից, որը խանգարում է սովորելուն: Դպրոցում հաստատված կարգ ու կանոնի, աշակերտների՝ ուսման նկատմամբ ունեցած հետաքրքրությունների, ուսման մեջ ձեռք բերած հաջողությունների մեջ համազգեստը շատ կարևոր դեր ունի:

Որոշեցին.- Մինչև ուստարվա ավարտը կազմակերպել համազգեստի չափագրման, ձեռքբերման աշխատանքները՝ տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալի, սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի, դասղեկի հսկողությամբ և մասնակցությամբ:

Ծնողական խորհրդի նախագահ՝ Մարիամ Ազիզյան
Քարտուղար՝ Անի Դավթյան